

Վառինք , ըզձեզ 'ի մարմանդի
 Երբ տեսանեմ մարցդ առ երի
 Խայտալ թընդալ ոստոստելով
 Եւ անուշակ բառաջելով ,
 Ելի արտօսր յաչացս հոսի
 Եւ թաղծուծին զինե պատի ,
 Բարձրակական զայերս լընուն
 Լ'նմրելիթար սղեոցս հընչին :
 Տըղայս 'ի գիրկ զըզուիլ 'ի մարց
 Երբ տեսանեմ գորովաղբած
 Եւ արտասուօք բերկրապատար
 Սոր առ մանկիկ համբոյրս տալ ,
 Լ'սիրտս յալիս ցաւոց ծրփի
 Յուխ արտասուաց աչքս հեղձանի :
 Բարբառ մանկանց որ մայր ձայնեն
 Սուր ինձ սըլաք 'ի սիրտ մըխեն :
 Ի զուր ես որբն սըրտաբախ
 Սընամ 'ի մէջ մանկանց մատաղ ,
 Թ' իցէ արդեօք մարցն 'ի միջի
 Որ ձայնիցէ զիս իւր որդի :
 Սինչ տըղայոց խաղքն աւարտին
 Վրտնապլաստակ ամենեքին ,
 Վիմեն 'ի գիրկս իւրեանց ծնողաց
 Սընջել ըզլերմ քիրտն երեսաց ,
 Ես տապակէզ 'ի մէջ դաշտի
 Յիմ ընկերացըս մեկուսի ,
 Լամ 'ի մօրէ անլուր անկոչ
 Եւ նըւաղիմ սիրտ 'ի յոգւոջ :

ՅԱՌՈՒԹԻՒՆ ՃԵՊԵՃԵԱՆ

Ես զգայուն սրտի գեղեցիկ թելա-
 դուծիւնը կը յիշեցնէ մեզի Վրդբ-
 հուայթ Լ'նգղիացի բանաստեղծին ,
 որն որ խաղական թարգմանութենէն
 այսպէս 'ի հայ դարձուցեր է հիմկու
 Ռաֆայէլեան Սարժարանին յառա-
 ջադէմ ուսանողաց մէկը :

Սանուհ Բափառապան :

ՅՈՐԺԱՄ հողմն ձմեռնային հնչէ 'ի
 հովիտս լերանց և շինական գոհհիկ
 աղիէ զգուռն ընդդէմ մուրացիկին , յոր-
 ժամ արտասուք սառնորակք երերան
 յանմիտիթար աչկունս իմ , ո՛հ քանի
 դառն է յայնժամ բաղդ թափառական
 մանկին :

Սառնակառոյց է ձմեռն , և ես չու-
 նիմ հանդերձիկ , և սիրտ իմ պաղեալ
 է 'ի ծոցի իմում : Չունիմ ես հայր և
 մայր , և ոչ մերձաւոր զոք . քանզի թա-
 փառական եմ ես մանուկս որբիկ :

Սակայն էր և իմ տուն , և հայր և
 մայր սիրասուն և քաղցրալուր ըզձից
 իմոց մանկականաց : Տնակ մեր ծած-
 կեալ էր 'ի դարարագեղ և 'ի կանաչա-
 զգեստ ձորակի միջ , ուրանօր հեծէր
 աղաւնեակն զերգ իւր գորովաղէտ :

Բայց հայր և մայր իմ կոչեցան ան-
 դուստ , և լքին զիս 'ի խաղալիկ ան-
 գութ և անգորով օտարաց : Թափա-
 ռական եմ ես մանկիկ թշուառ :

Վառնաշունչ են օդքս , և ձիւն սաստ-
 կացուցանէ զհողմն բքաբեր , և չիք
 ոք որ ունկն մատուցանիցէ արտասուա-
 հայց և կարեվէր վշտիս : Երթայց ու-
 րեմն 'ի գերեզմանս , ուր դնին ծնողք
 իմ , և մահ լիցի միակ բարերար թա-
 փառականս մանկան :

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻ ՀԱՅՈՑ

Բ .

Վրահ Բ Տեգրանայ , և Թափ հայեպան :

ԵՅՍ տախտակիս վրայ երեցած 3 ,
 4 ու 5 թիւ պատկերները , որոնց վրայ
 միայն կ'ուզենք խօսիլ աս անգամ , են
 մեր Բ Տիգրան Լըշակունի թագաւո-
 րին դրամներէն ոմանց պատկերները ,
 որոնց վրայ տեղն 'ի տեղը խօսիլը քաջ
 դրամագիտաց թողլով , մենք մեր չա-
 փովը կը հրատարակենք անոնց՝ որոնց
 ազգասիրութեան ծարաւը բաժակով
 մ'ալ կշտացընելը միշտ հաճոյ պաշտօն
 մը կատարել կը սեպենք . և միայն պատ-
 կերներն ալ անունով ցուցընելը անոնց՝
 որ ամենեւին չեն տեսած մեր քաջ և
 մեծ նախնեաց յիշատակարանները՝ կար-
 ծեմք որ մեծ զուարճութեան պատճառ
 կ'ընծայէ . մանաւանդ մեր Բ Տիգրա-
 նայ դէմքը տեսնել՝ պատմութեան տա-

Ճարին մէջ Հայոց փառացը ուխտ եր-
թալու պէս բան մըն է . ու որ գիտէ
Հայոց և ընդհանուր պատմութիւն՝ գի-
տէ որ Տիգրան իր ժամանակուան թա-
գաւորաց մէջ ամենէն մեծն էր , իրմէ
առջիններուն և վերջիններուն մէջն ալ
գլխաւորներուն մէկը . հոս չենք ուզեր
իր վարքը հիւսել , հապա միայն իմա-
ցընել թէ Տիգրանայ անունը , և կրնամ
ըսել թէ միայն աս Տիգրանայ անունն
է որ բոլոր Հայոց անուններէն աւելի
հռչակուած է թէ իր ատենը և թէ
իրմէ վերջը . իր ատենը 50 տարիէն ա-
ւելի բոլոր ծանուցուած Միոյ հիւսի-
սային և արեւմտեան աշխարհներուն
մէջ՝ առաջին պատուելի անունն էր իր
անունը . արեւելեան Միոյ ալ , Պար-
սից ընդարձակ գաւառներուն մէջն ալ
իր անունն էր առաջին՝ երբոր նախագահ
էր Պարթևադանց թագաւորներուն
մէջ . հարաւային կողմերն ալ իր անու-
նէն կը սարսէին և կը պաշտէին , Մսորիք
կամաւ իրեն ծառայ եղան և Սելևկիա-
ցոց պանծալի թագը տասնըօրս տարի
իրեն ընծայելով՝ խաղաղութիւն գտան .
Պաղեստին ալ առաւ իր իշխանութեա-
նը սանձը , և Նրոսաղէմ ալ պատկա-
ռեցաւ անկէց , Նստիդոսի և Հեղիո-
դորոսի դէմ ցրցուցած սարսափները՝
հասուց անոր : Նշարհիս ահարկուն
Հռոմ՝ որ թէպէտ վերջը պարծե-
ցաւ իբրեւ յաղթող , ազատ չէր անոր
վախէն , երբոր իր ատենական հրապա-
րակին առաջին լեզուն Սիկերոն մեծ
ճարտասանը կը կանչէր Հռոմայեցոց ,
թէ « Մըթուն կեցէք , վասն զի Տիգ-
րան թագաւոր թագաւորաց կեցեր
» է Հայաստան » : Իրմէ վերջն ալ
քանի որ իր գաւազանը իր որդւոց
ձեռքն էր՝ Հռոմայեցիք չէին կրնար
անհոգ ըլլալ Հայաստանի վրայ . ին-
չուան հիմայ ալ ընդհանուր պատմու-
թեանց մէջ Հայաստանի ամենէն ծա-
նօթ գիպուածը՝ Տիգրանայ պատմու-
թիւնն է օտարաց մէջ , և իրենց թան-
գարաններուն մէջն ալ Հայոց յիշա-
տակներէն ծանօթագոյնն են անոր դը-
րամները . որոնց վրայ դառնալով կ'ը-

սենք թէ յիրաւի այսպէս պէտք էր
ըլլալ թանգարանաց համար , որովհե-
տե աս թագաւորը ինչպէս մեր ամե-
նէն մեծ թագաւորն էր՝ ամենէն ալ
հարուստ ըլլալով և երկար ատեն թա-
գաւորելով և նոր նոր փառքերով , շատ
և շատ տեսակ ստակ կոխեց իր անուամ-
բը՝ , որոնցմէ ինչուան հիմայ տասը տե-
սակի չափ , այսինքն տասը զանազան
դրոշմով կամ պատկերով կը գտնուին ,
թէպէտ շատը հազուագիտներու և
անգին դրամոց կարգն են : Մըթակունի
Հայոց դրամներուն շէնքն ալ ընտիր է ,
և Սակեդոնական դրամոց հաւասար
կը դնէ Սիւլէր մեծ հնախօսը :

Հոս դրամներնուս մէջ վերջինը
(Թ . 5) Տիգրանայ ամենէն ծանօթ
և գլխաւոր դրամն է , որ է արծըրթէ
չորեքդրամեան մը , մեծութեամբ հա-
ւասար օրինակին , շատ թանգարաններ
կը գտուի այս դրամը , մեր քով ալ կայ
մէկ հատ . մէկալ երկուքը պղնձէ դրաք-
մէներ են , կամ մանր դրամներ , որ
պատկերին մէջ 2 կամ 3 անգամ մեծ
քաշած են . ասոնցմէ ալ 3 թուոյն նը-
ման մէկ մը կայ մեր թանգարանին
մէջ : Մըթըրթէ դրամին երեսն է Տիգ-
րանայ դէմքը , որ ասոր վրայ աւելի
ճիշդ և նման է քան մէկալ երկուքին .
գլուխը կայ Հայկական խոյրը՝ որուն
վրայ վերջը կը խօսինք . եղբրքը պարզ
զարդ է : Ինդդիմակողմը՝ այլաբանա-
կան պատկերք է որ կը ցուցընէ Տիգրա-
նայ տերութիւնը Մսորոց երկրին վրայ ,
կամ Սելևկիացոց նուաճիլը . երկու
կնկան դէմք կայ , վարինը կը նշանակէ
Որոնդէս Մսորոց գետը և անով Մսո-
րոց երկիրը . վրայի նստածն է յաղ-
թութիւնը , որուն ձեռքն ալ կայ յաղ-
թական պսակ կամ ոստ մը , ինչպէս ու-

1 Կը պատմեն Ազպիանոս , Ստրաբոն և այլն ,
թէ Տիգրան Պոմպէոսի առջև իր մեծանձնութիւ-
նը ցուցընելու համար՝ տուաւ անոր մէկէն 6000
տաղանդ արծաթի , իր արիւնունին 10,000 դրաք-
մէ , ամէն հարիւրապետի 1000 դրաքմէ , ամէն մէկ
զինուորի 50 . ասոնց գումարը հիմակուան Գաղ-
ղիոյ 30 միլիոն ֆրանքէն աւելի է : Բայց Տիգրա-
նակաների մէջ Հռոմայեցիք ասկէց շատ աւելի
միայն կոխած ստակ գտան :

րիշ մեծ ոստ մ'ալ կայ դիմացի եզեր-
քը • խորագիրն է յունարէն ΒΑΣΙΛΕ-
ΩΣ ΤΙΓΡΑΝΟΥ, այսինքն (ԺԱԳԱՒՈՐԻ
ՏԻԳՐԱՆԱՅ՝ : Յաղթութեան ձեռքին
տակ և աթոռին տակ փակագրի պէս
նշաններ կան, մէկը յունաց Մ (Ϝ)՝
գրին կը նմանի, մէկալը խաչաձև մը
Ρ (ρ) գրին գլխովը • ասոնց ինչ նշանա-
կելը յայտնի չէ, սովորաբար ուրիշ
գրամներու մէջ թագաւորաց թագա-
ւորութեան քանիւրորդ տարին ըլլալը
կը նշանակուի անոնց տեղը¹ • վերի կող-
մի եզերաց զարդը՝ արքունական գաւա-
զան է :

Պղնձէ գրամներուն երեսները նման
են արծաթին երեսին, բաց 'ի թագին
զարդէն, վասն զի ասոնց վրայ թռչող
պատկերները չկան • իսկ ընդդիմակող-
մերին մէկմէկէ տարբեր • 4 թիւը դար-
ձեալ կը նմանի արծաթին, բայց ասոր
խորագիրը յաւելուածով կ'ըսէ (ԺԱ-
ԳԱՒՈՐԱՅ (ԺԱԳԱՒՈՐԻ ՏԻԳՐԱՆԱՅ :
Յաղթութեան ձեռքին ներքեւ ալ փա-
կագիր չկայ • վարի փակագրին ալ գը-
լուխը պակաս կ'երևնայ : իսկ 3 թուոյն
դրոշմածքն է Յաղթութիւն մը քաղա-
կամ թռչելու ձևով, աջ ձեռքը պսակ մը
բռնած, ձախ ձեռքով ալ զգեստները
կ'ամփոփէ որ շարժման արգելք չըլլայ •
խորագիրն է արծաթոյն նման (ԺԱԳԱ-

1 Յունարէն գրելուն պատճառն աս է որ ինչ
պէս հիմայ Գաղղիացւոց լեզուն արքունեաց լեզու
է հասարակ, ասանկ ալ Աղեքսանդրէն վերջը Ա-
սիացւոց արքունեացը մէջ մասա յունարէնը, և ո-
մանց մէջ մասնաւոր փոյթ կար աս լեզուն և գըլ-
րութիւնը սորվել և ծաղկեցնել, անանկ որ ի-
րենց պարծանք կը սեպէին Ֆիլէւէն (Յունաւէր)
ըսուելը, և իբրև մականուն իրենց գրամներուն
վրայ ալ կը գրոշմէին, ինչպէս Տիգրանն ալ ըրած
է կ'ըսէ գրամագէտ մը • մենք չենք տեսած այն
գրամը • բայց Տիգրանայ յունասիրութեան կամ
մանաւանդ յունագիտութեանը շատ ապացոյցներ
ունինք, որոնք հարկ չէ հոս յիշել, բայց միայն
այսչափ որ Տիգրանակերտի մէջ թէաթրոններ չի-
նէլ տուաւ յունարէն թատերգութեանց, և իր
որդին Արտաւազդ Ա ոչ միայն այն թատերգու-
թեամբ կը զուարճանար, այլ ինքն ալ յունարէն
ողբերգութիւններ և ճառեր գրեր էր :

2 Տիգրան ՅՏ տարիի չափ թագաւորեց թէ
առանձին թէ իր հօրը և թէ իր որդւոյն հետ մէկ
տեղ • իր թագաւորութեան սկիզբը կը գրուի
Քրիստոսէ 90 կամ 95 տարի առաջ, վերջն ալ
Քրիստոսէ 36 կամ 37 տարի առաջ :

ԻՌՐԻ ՏԻԳՐԱՆԱՅ, բայց աւելի բառի
մը կտոր ալ կայ ΠΑΡ (ϙ), որ որոշ
չգիտցուիր ինչ նշանակելը, արդեօք
պարթևական ըսել կ'ուզէ (ինչպէս թէ
իր հօրը Արտաշէսի նման Պարթևաց
երկիրը կոխած ըլլայ այն դրամը), թէ
ուրիշ երկրի մը վրայ ըրած Տիգրանայ
յաղթութիւնը կը նշանակէ : Եւոր պէս
ուրիշ յաղթութեան դրամի պատկեր
մը կուտայ իսկէ գերմանացին Կոթայի
թանգարանէն, ուր յաղթութիւնը նըս-
տած բարձր տեղ մը, մէկ ձեռքը կըր
պսակ, մէկալ ձեռքը ամաղթեղջիւր¹,
խորագիրը միայն (ԺԱԳԱՒՈՐԻ ՏԻԳՐԱ-
ՆԱՅ է, և աս փակագիրները $\frac{O E}{O X}$: Բէ-
լորդ սեպելով Տիգրանայ ուրիշ դրամ-
ցը վրայ ալ խօսիլ, երբոր պատկերները
դիմացին չունինք, թէպէտ ասոնցմէ
աւելի չքնադագիւտ և անգին գրամներ
ունի, և կարծեմ թէ ոսկիէ ալ գտուած
կայ, դարձնենք խօսքերնիս Հայկա-
կան խուրին :

Եւս գրամներուն վրայ և վերի եր-
կու պատկերներուն վրայ ալ Հայկական
նշան միայն աս թագերն են որ խոյր
կ'ըսուին • և որովհետեւ մինակ Հայոց
թագաւորներն են որ աս ձև խոյր գոր-
ծածեր են՝ Հայկական խոյր կը կոչեն
հնախօսք, և իրենց լեզուով կ'ըսեն
(ԺԻԳՐԱՅ² • թէպէտ մէկ մէկէ քիչ մը կը
տարբերին՝ բայց ընդհանրապէս ամե-
նուն ձևն ալ նոյն է, և իրեք գլխաւոր
մասն ունի • մէկն է երկայնաձև խողո-
վակ մը ինչպէս լաւ կ'երևնայ 1 թուին
վրայ, վերի բերանը բաց և ճառագայ-
թաձև կամ սրանկիւն ծայրեր բաժ-
նուած եզերքը, ինչպէս յայտնի կը
ցուցնեն 1, 3, 5 թիւերը • աս մասը
առանձին անուամբ Կիդար կամ Կին-
դար³ կը կոչուի • միայն գիտնալու է որ
սովորական Հայկական խոյրը աւելի
բարձր է քան զՏիգրանայ, ինչպէս որ
լաւ կ'երևնան առանձին Հռոմայեցւոց
գրամներուն վրայ դրոշմած Հայկական
խոյրեր, նոյնպէս ուրիշ Հայոց թագա-

1 Որ է նշան առատութեան :

2 Յն • Τίρα. 1^ա • Tiara.

3 1^ա • Cidaris.

որաց զբաժնեւրուն, զոր օրինակ Օւս-
րատ թագաւորին, որուն պատկերը ու-
րիշ անգամ կ'ընծայենք: Վարձեալ
կ'երենայ թէ Վիգարին վերի ծայրը
կամեղերքը՝ երբեմն բուն խոյրին մասն
էր կպած, երբեմն ալ պսակի պէս զատ
կ'անցընէին անոր ծայրը. և անոր հա-
մար ամէն խոյրի վրայ չերենար, ինչ-
պէս 2 թուին վրայ ալ: Իսկ իդարը ա-
ռանց ուրիշ թագաւորական նշանի կը
գործածէին Հայոց ուրիշ պատուաւոր
անձինքն ալ, մանաւանդ քուրմք. Լնա-
ւարդեցւոյն կամ Վիւրիկեցւոց (Յայսմա-
ւուրքը) Նդեսիոյ սուրբ Սարսամեպիս
կոպոսին վկայաբանութեանը մէջ կը
գուրցէ. « Սաբիւլոս քուրմն կուոյն ծեր
„ գոլով՝ զգեցեալ էր յաղագս տօնին
„ պատմութեանս պայծառս երևելիս, և
„ Վիգար նկարագրեալ ոսկով՝ ի գլուխ
„ իւր »¹:

Խոյրին երկրորդ մասն է՝ թագին
վարի կըր բերնէն կախուած մասը՝ որ
և Լնալէ կ'ըսուի. ասիկայ ականջէ ա-
կանջ կէս կըր ձեռով ձգուած է ծոծրա-
կը պատելով. և ինչպէս աս պատկեր-
ներուն մէջ կ'երենայ՝ բուն ականջին
շտկութեամբ վարէն անկիւնաձև կըտ-
րած է, ձև և վայելչութիւն ու դիւ-
րութիւն տալու համար. երեսին կողմի
ականջաձև կտորները աս օրինակներուս
մէջ շիտակ կամ անկիւնաձև են, բայց
ուրիշ թագերու վրայ կըրածն ալ կ'ե-
րենան, որ աւելի վայելչ ալ են: Իսկ
մասին կրնանք արտաբերել կամ գրա-
րել, և յատուկ է ամէն խոյրերու և
փոխադական ըսուած գրականերու, և
շատ հին և բնական ձև է. և ինչպէս 2
թ պատկերէն կ'երենայ՝ աս ալ երբեմն
շարժական կ'ըլլայ և առանց ասոր ալ
թագը կը գրուի. երբեմն ականջի պէս
թագէն կը կախուի, երբեմն գլխարկի
պէս գլուխը կը ծածկէ, և խողովակա-
ձև թագը անոր վրան կ'անցնի²:

1 Քաղոց Թ: Երկրորդ գարուն սկիզբն էր սուր-
բն Քարսամ, որուն ձեռքով Սաբիւլոս (Թերևս
Սաբիւլոս որ է Շապուհ) քուրմն ալ քրիստո-
նէայ եղաւ:

2 Աս ականջներն են Թերևս վերջաւորն. ին-

խոյրին երրորդ մասն է Պսակը՝ կամ
Լըրիւն կամ Հանգոյս Բադի, և է այն
ժապաւենը որ թագին վարի կողմէն
բոլորելով՝ ետեւի դին կը կապուէր հան-
գոյց, և ծայրերը արձակ կախուած կը
ծածանէին: (Թերևս աս մասին կը յար-
մարի Լաբարոշ անունը, որ երբեմն ամ-
բողջ թագ կը նշանակէ, երբեմն թա-
գի վրայ կապուած զարդ:

Լքարեան թագաւորներուն և նոսն
Լըշամայ խոյրը՝ առաջին մասը չունին,
հապա բուն խոյրը կամ գդակն է բար-
ձրացած, ծայրը կըր և գոյ և փոխ-
գացի գդակի պէս քիչ մը դէպ առաջ
ծուած. բայց Լնանքները ու Պսակը
ասոնք ալ ունին. կէս մը Պարթեւաց
խուրին կը նմանի, որուն գլուխը կըրա-
ձև է, կէս մ'ալ բնիկ հայկական ձևն
ունի: Իսկ տեսակ խոյր էր որ Լնանուն
Լքարու որդին պատուիրեց Լքդէ
հայրապետին շինելու, « Լնել նմա
խոյր բեհեզեայ՝ անգուածով ոսկեայ »³:

Իսկ խօսքէս և օտարաց յիշատակու-
թեանն ալ գիտենք որ՝ հայկական խու-
րին կամ թագին նիւթը ազնիւ կեր-
պասէ կամ բեհեզէ էր, որուն վրայ ու-
կի բանուած էր՝ ինչպէս կ'ըսէ Յայսմա-
ւուրքն ալ. ոսկիէն ալ աւելի էին անդին
գոհար քարեր՝ որոնցմով խուրին ամէն
եղերքներն ալ և երեսն ալ զարդարուած
էին. յայտնի է որ Պսակն ալ կամ Լ-
պարօնն ալ նոյնպէս ազնիւ նիւթէ և
մարգարտով ու ակամբք բանուած էր:
Ինչպէս թէ Հայոց սեպհական և գըլ-
խաւոր զարդն էր թագին վրայ այն
թռչունները և այն աստղերը որ կը
տեսնենք. ասոնք պարզ զարդ չէին,
հապա խորհրդաւոր նշաններ էին թա-
գին ձևին պէս հին: — Ոսկից առաջ
եկած. — սկիզբը ժամանակին հնու-

չուն հիմայ եպիսկոպոսաց թագը ասոնց նմա-
նութիւնը կը կրէ:

1 Լա. Diadema. — Աս երկզն զատ է այն երկզը
կամ փաթթոցը՝ որ կ'երենայ թէ սուգի ատեն կը
պառնէին թագին վրայ հին հայերը. այսպէս ըրեր
էր Տիգրան, կ'ըսէն հռոմայեցիք, երբոր Պոմպէո-
սի եկաւ. մեծ պատերազմին ատենն ալ երկզով
պատեր էր թագը՝ որ ով ըլլալը չիմացուի:

2 Խոր. Բ. ԼԳ:

Թեանը մէջ ծածկուած է . աս յայտնի է որ Տիգրանէն վերջը օտար Թագաւորի գլուխ աս Թագս որ տեսնենք , ինչպէս Կոմագենեայ՝ Թագաւորաց , կամ Բարպատականի Սարաց՝ պէտք չէ տաւակուսիլ Թէ Հայոցմէ առած են անոնք : Հայոց յիշատակարանաց մէջ ամենէն հինն է Օաճրատայ գրամը աս Թագովս՝ որն որ Քրիստոսէ 200 տարի առաջ Թագաւորեց , և Հայկազունի Թագաւորներնէս գրեթէ 100 տարի միայն ետքը . ասկէ առաջ ուրիշ Թագաւորի գլուխ աս Թագը չերենար : Ով կրնայ տարակուսիլ՝ Թէ Օաճրատայ և Բարաշիասայ պէս գերագոյն ազգասէրք՝ որ Սելեւկիացւոց հզօր տէրութիւնը արհամարհելով՝ իրենց հայրենիքը ազատեցին և Հայոց դեռ նոր ընկած Հայկազնեան Թագաւորութիւնը կանգնեցին՝ իրենց նախնեաց բնիկ Թագն ալ գլուխնին դրած չըլլան : Բայն չափ ալ անտարակոյս է աս , որ գիտենք ալ Թէ չէ Թէ միայն Թագաւորները կը գործածէին աս Թագս , հապա բուրմերն ալ և մեծ իշխաններն ալ . միայն Թէ ասոնցք քիչ մը գէպ ՚ի առջև ծնած էր ինչպէս Բագարեանցը կամ Փոխգացին , իսկ Թագաւորներունը ուղղաբերձ կամ շիտակ էր . ասանկ էր Սարացն ալ : Չեմ տարակուսիր որ Քսէնոփոն աս խոյրս կը ցուցնէ մեզի ինչուան Ա Տիգրանայ ատենն ալ , երբոր կ'ըսէ Կիւրամարզին երրորդ գրոց մէջ Հայոց Թագաւորին որդւոյն համար , « Բնկենոյր զխոյրն և զվերջաւորսն փողոյ փողեալս » : Բայն խոյրն էր հին Սարաց խոյրն ալ , աս էր հնագոյն Բաբելոնացւոցն ալ , ինչպէս քանի մը սակաւագիւտ փորուած քարերու վրայ գտնուեցաւ . աս խոյրս կ'երենայ աւելի կամ պակաս նմանութեամբ Եգիպտոսի խորին հնութեանց մէջն ալ . և անոնց մէջ աւելի քրմաց սեփականած երեսնալով , ինչպէս այսօրուան օրս ալ քրիս-

3 Commagene. Ասիայ է մասամբ Կամախ կամ Եփրատացւոց գաւառը Ամգայ վերի գին , որուն գլխաւոր քաղաքն է Շամշատ կամ Սամուսատ , ուր Քրիստոսէ առաջ և վերջը առաջին դարերուն մէջ առանձին Թագաւորներ նստան :

տոնէից ծայրագոյն քահանայապետին խոյրը մէկ կերպով մը ասոր ձեւը կը բերէ , յայտնի գուշակել կուտայ մեզի որ աս Թագն էր նախնի Հայկազանց և Թերևս քան զՀայկն ալ առաջ եղող Թագաւոր--քահանայից Թագը , որուն եզական վսեմութիւնը անանկ վսեմ ժամանակ մը կ'ուզէ իրեն սկզբան : Սովորութեանց վրայ խօսող երևելի հեղինակ մ'ալ՝ կ'ըսէ Թէ Հայոց խուրին վրայ միացած կ'երենայ արքայական և քահանայական Թագ : Բայն ատենէն առած կ'երենան ինծի այն աստղերը որ հին Հայոց աստեղագիտութեան նշաններն են , Թուռններն ալ կամ արծուի են կամ աղաւնի , որ երկուքն ալ Հայոց մէջ հնուցմէ ՚ի վեր նուիրական են եղած :

Հայկական Թագին սկիզբը այսչափ հին կ'ելլայ , բայց վերջը ուր կը հասնի յայտնի չէ , այսինքն ինչուան որ ատեն նոյնը գործածուիլը . վասն զի հին յիշատակարաններէն Բագարեանց գրամներէն վերջը քան չունինք , անոնցմէ ետքինն ալ Քրիստոսի Բ դարուն մէջ կ'իյնայ . անոնցմէ ետքը մինակ մէկ մեծ Թագաւորի մը Թագի պատկերք ունինք , որ ան ալ ուրիշ անգամ կը հրատարակենք , և սակայն նման չէ Հայկական Թագին . չենք գիտեր որոշ Թէ մեր քրիստոնեայ Բռնակունի Թագաւորները ինչ Թագ կը գործածէին : Սիայն կ'երենայ Թէ անանկ հին սկիզբունեցող և այնչափ ատեն Հայաստանի մէջ գործածուած Թագը՝ անկարելի էր որ դիւրաւ ջնջուի Բռնակունեաց ատեն . մանաւանդ կը տեսնենք որ Հայոց նախարարներն իրենց հին սովորութիւնները մեծ նախանձով միշտ պահէր են : Հայկական Թագին մէկ մասը կամ շոշորդը կը յիշենք Բուզանդայ մէջ կարգալով , որ Պարսից Թագաւորը Դ դարուն վերջերը՝ Սանուէլ Հայոց սպարապետին խաւրեց « Թագաւորական պատմութեան , և զխոյ պատիւ գարգմանակ ոսկի արծաթ , ու ՚ի պատիւ գլխոյ ՚ի վերայ գազա-

« Թանն 'ի Բեիանց արծառոյն հանգոյց Բազի
 « Կաղեալ աշխարհանդ հանգոյց » : Եւ
 Հանգոյցն է որ կը կարծենք խուրին Պը-
 տակը, և այն արծիւն ալ կրնայ կարծուիլ
 Տիգրանայ Թագին վրայ տեսածնիս :

Բագրատունեաց գործածած Թագն
 ալ յայտնի չէ, որովհետեւ ամենեւին
 անոնցմէ զրամ չունինք . միայն Հաղ-
 բատու մեծ եկեղեցւոյն ճակատը դեռ
 կը տեսնուին Սմբատ և Վուրգէն Թա-
 գաւորաց պատկերները, և ինչպէս կը
 ստորագրեն ականատես գրիչք՝ Սմբա-
 տայ Թագը դեռ Հայկական Թագին
 նմանութիւն պիտի ունենայ, որովհե-
 տեւ կ'ըսեն Թէ սրածայր է և չորս Թեր-
 Թով, եղբրն ալ քարերով զարդարած .
 Հիներէն ալ ոմանք Հայկական Թագը
 քառակուսի նմանցուցեր են : Իսկ
 Ուրբինեանց Թագը իրենց ատենի
 Յունաց և Լատինացոց գործածած
 Թագերն էին : Լամբրոնացիին իր Լեոն
 Թագաւորին զրած Թղթին մէջ մեղա-
 ղրելով սա խօսքս ալ կ'ըսէ, « Ս'ի կայք
 « բացագլուխ ըստ Լատինացոց իշխա-
 « նացն և Թագաւորացն . . . այլ դիք
 « Եարփուր (կամ Եարփուշ), որ
 « պէս ձեր նախնիքն » : անծանօթ է
 մեզի սա անունը, Թերեւս նախնի Հայք
 սա անունը կուտային Թագաւորական
 Թագին . Լամբրոնացիին խօսքէն Թե-
 րեւս մէկը կարծէ Թէ միայն եկեղեցնայ
 մէջ սա Եարփուրը գործածէին, բայց
 հաւանական չերենար . հին բառագրոց
 մէջ ալ կը գտնենք Եափրակ բառը որ
 Պսակ ըսել է, և ուրիշ տեղ՝ Եափրա-
 կաղգեաց՝ Պսակաղգեաց, որոնք ընդ-
 հանուր Թագ կը նշանակեն :

Հերիք ըլլայ հոս այսչափս Հայկա-
 կան Թագին (կամ Թէ կ'ընդունիք՝
 Եափրակին վրայ) . երբոր ուրիշ պատ-
 կերաց վրայ խօսելու ըլլանք, դարձեալ
 Հայ Թագի վրայ խօսք պիտի գայ :
 Տիգրանայ պատկերին վերջի աչք մ'ալ
 տալով՝ մէկ մեծ գիտելու սովորութիւն
 մ'ալ չեմք տեսներ . — մօրուք չունի .
 կը մնայ որ ուրիշ հեղ Հայոց մէջ մնալի
 և մօրուաց սովորութեանը վրայ ալ խօ-
 սինք :

Հ. Ղ. Ս

ՊԼՏՄՈՒԹԻՒՆ

Հակոբ Բերգելիոս :

ԲՃԽԱՐՀԻՍ և գիտութիւնք սա մօտ
 օրերս մեծ ու երեւելի մարդ մը կորսն-
 ցուցին, որ է Հակոբ Բերգելիոս բը-
 նալոյծը, հայր և հեղինակ հիմնական
 բնալոյծներուն : Նաաւ Բերգելիոս
 1779^{ին} Շուետի Լինքեօիինկ քաղա-
 քը . տղայական հասակին մէջ մասնաւոր
 հակամիտութիւն մը չէր ցուցնէր բնա-
 կան գիտութեանց, բայց հասակին ա-
 ճելովը իր սրտին մէջ ալ գիտութեանց
 եռանդը աւելի վառուեցաւ : Երբոր
 տասնըօթը տարուան եղաւ, զնաց
 Ուփսալայի համալսարանը բժշկութիւն
 սորվելու, և հոն սկսաւ իրեն մեծ հան-
 ճարը կամաց կամաց ամենուն յայտնել
 բնութեան ամէն գաղտնեացը քննիչ ու
 մեկնիչ ըլլալովը : Բժշկութեան ար-
 հեստին մասնաւոր ախորժ մը չունենա-
 լով, ինքզինքը տուաւ բոլորովին բնա-
 կան գիտութեանց և մասնաւոր կեր-
 պով բնալուծութեան, և շատ չանցաւ
 Սթոքոլմ մայրաքաղաքին համալսարա-
 նին մէջ վարժապետ եղաւ բնալուծու-
 թեան ու գեղագործութեան, և հոն
 իրեն տոկուն համբերութեամբ և եր-
 կայն ու խորին քննութեամբ ու անթիւ
 փորձերով՝ շատ ճիշտացուց բնալուծա-
 կան գիտութիւնը . շատ գիւտեր գտաւ
 ու զանազան նոր մարմիններ և սկզբնա-
 տարերքներ յայտնեց . գրեց բազմահա-
 տոր բնալուծութիւն մը բազմահմուտ
 տեղեկութեամբ, որուն մէջ Թէպէտ և
 կան մէկ քանի սխալ կարծիքներ, բայց
 ուրիշ անթիւ տեղեկութիւններու ու
 գիւտերու մէջ անտես կ'ըլլան մարդուս
 աչքին . և այսպէս իրաւամբք Բերգել-
 լիոս հայր կոչուեցաւ բնալուծութեան,
 ինչպէս որ Լիննէոս իրեն հայրենակիցը
 կոչուէր էր հայր բուսաբանութեան,
 որոնք երկուքն ալ պարծանք են Շուետ
 ազգին և Ուփսալայի երեւելի համա-
 լսարանին, որուն մէջ վարժապետեցին :
 Բերգելիոս իրեն կենաց վերջին տա-